

**Կասադո Կոկան Իսպանիայի (Casado Coca v. Spain), 1994, Application No. 15450/89, Մարդու իրավունքների եվրոպական դատարան**

Մանկցիա՝ նախազգուշացում, տուգանք

Թեսթ՝ անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում

ՄԻԵԴ՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել

Վճիռը՝ միաձայն

**Փաստական հանգամանքներ**

Պարոն Կասադո Կոկան Իսպանիայի քաղաքացի է և մասնագիտությամբ իրավաբան: Իր գրասենյակը բացելուց հետո նա պարբերաբար այն գովազդել է Բարսելոնայի տարբեր թերթերում, «Իսպանիայի գերմանական ամսագրում» և գրել մի քանի մասնավոր ընկերությունների՝ առաջարկելով իր ծառայությունները:

Նշվածի առնչությամբ Բարսելոնայի փաստաբանական գրասենյակը չորս անգամ կարգապահական վարույթ էր հարուցել նրա դեմ, այնհետև կիրառել տույժեր և երկու նախազգուշացումներ: Դիմումատուն ներքին բողոքներ էր ներկայացրել կիրառված տուգանքների նկատմամբ, սակայն երբեք չէր դիմել համապատասխան դատարան:

**Փաստաբանական պալատի վարույթները**

Դիմումատուի փաստաբանական գործունեության մասին մանրամասները հրապարակվել են թերթերում՝ զբաղեցնելով էջի մեկ երրորդը և ներկայացնելով դիմումատուի անունը, վերջինիս հեռախոսահամարը և գրասենյակի հասցեն:

Պալատի խորհուրդը հետագա կարգապահական վարույթ էր իրականացրել Կասկադո Կոկայի նկատմամբ, դրանից հետո նա նաև գրավոր նախազգուշացում էր ստացել մասնագիտական գովազդով չզբաղվելու նախազգուշացումն արհամարհելու համար:

Դիմումատուն բողոքարկեց պալատի որոշումը, սակայն ազգային փաստաբանական գրասենյակն ուժի մեջ թողեց կիրառված տուգանքը:

**Դատական վարույթները**

Կասադո Կոկան դիմեց Բարսելոնայի դատարան՝ վիճելով, որ գովազդի նպատակն է եղել տեղեկացնել հասարակությանը և որ փաստաբանական պալատի կողմից կիրառված միջոցառումները խախտել են իր՝ սահմանադրությամբ երաշխավորված խոսքի ազատության իրավունքը: Նա նաև պնդում էր, որ միայն օրենքով կարող են նախատեսվել խախտումների և տուգանքների կիրառման դեպքերը և փաստաբանական պալատի կարգապահական տուգանքները հանդիսացել են ներքին ակտեր /կանոնակարգեր/, ինչն ինքնին խախտում է հանդիսանում: Դատարանը որոշեց, որ ներկայացվածը հանդիսացել է գովազդ և ոչ սուսկ տեղեկատվություն: Վերին աստիճանի դատարաններն ուժի մեջ թողեցին առաջին աստիճանի դատարանի վճիռը: Գերագույն դատարանը եզրակացրեց, որ երկրի սահմանադրությունը /20-րդ հոդված/ չի պաշտպանում գովազդը որպես հիմնարար

իրավունք, քանի որ գովազդը չի առնչվում արտահայտվելու, գաղափարների կամ կարծիքների հետ, այլ հայտարարություն է շահութաբեր գործունեության առկայության մասին:

Դիմումատուն այնուհետև իր պահանջը ներկայացրեց սահմանադրական դատարան, որը սակայն գործը չընդունեց վարույթ:

## **ՄԻԵԴ-ը**

### *Առկա է արդյոք միջամտությունը պետական իշխանության մարմնի կողմից*

Կարգապահական տույժ և նախազգուշացում կիրառելու որոշումը կայացրել է փաստաբանական պալատը: Նշված որոշումը, սակայն, հաստատել են ներպետական դատարանները, ինչպես նաև երկրի սահմանադրական դատարանները, որոնք բոլորն էլ հանդիսանում են պետական իշխանության մարմիններ: Այդպիսով, պետք է ընդունել, որ «պետական մարմնի» կողմից եղել է միջամտություն դիմումատուի տեղեկատվություն տարածելու իրավունքի նկատմամբ:

### *Արդարացված է արդյոք միջամտությունը*

Միջամտությունը խախտում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածով ամրագրված իրավունքը, բացառությամբ, եթե այն «նախատեսված է օրենքով», պայմանավորված է 10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված օրինական նպատակով և «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»:

### *Օրինական նպատակ*

Կառավարությունը պնդում է, որ մասնագիտական գովազդն արգելող որոշման նպատակն է եղել այլոց իրավունքները պաշտպանելը՝ մասնավորապես հասարակության և փաստաբանական պալատի այլ ներկայացուցիչների իրավունքների պաշտպանությունը:

ՄԻԵԴ-ը որևէ հիմք չունի կասկածելու, որ փաստաբանական պալատի կանոնների նպատակն է եղել պաշտպանել հասարակությանը՝ երաշխավորելով հարգանքը պալատի այլ անդամների նկատմամբ: Այդ առումով, անհրաժեշտ է նկատի առնել փաստաբանական պալատի անդամների մասնագիտական գործունեության հատուկ բնույթը: Որպես դատարանում գործ ներկայացնողներ նրանք օժտված են գործը ներկայացնելու և անձեռնմխելիության իրավունքով, սակայն նրանք պետք է դրսևորեն պատշաճ, ազնիվ և արժանապատիվ վարք: Գովազդելու սահմանափակումները որպես սովորույթ հիմնավորված էին նման առանձնահատկություններով: Որևէ փաստ չկա ապացուցելու, որ փաստաբանական պալատի խորհրդի որոշումը չի համապատասխանել օրենսդրության նպատակին:

### *«Անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում»*

ՄԻԵԴ-ի գտնում է, որ պետություններն ունեն որոշ «հայեցողության լուսանցք» միջամտության անհրաժեշտությունը գնահատելու առումով, սակայն այդ հայեցողությունը ենթակա է ՄԻԵԴ-ի վերահսկողությանը ինչպես համապատասխան կանոնների, այնպես էլ դրանց կիրարկման որոշումների առումով: Հայեցողական լուսանցքը հատկապես կարևոր է անագնիվ մրցակցության բարդ և խոցելի ոլորտում: Նույնը վերաբերում է գովազդին: Նշված գործում ՄԻԵԴ-ի խնդիրն է գնահատել, թե ազգային մակարդակում ձեռնարկված միջոցառումները սկզբունքորեն արդարացված և համաչափ են արդյոք:

Քաղաքացու տեսանկյունից գովազդի նշանակությունն է պարզել իրեն առաջարկվող ապրանքի կամ ծառայության առանձնահատկությունները: Որոշ դեպքերում նույնիսկ օբյեկտիվ և ճշմարիտ գովազդը կարող է սահմանափակվել այլ անձանց իրավունքների նկատմամբ հարգանքն ապահովելու նպատակով՝ պայմանավորված տվյալ գործունեության կամ մասնագիտության հատուկ առանձնահատկություններով: Նման սահմանափակումները, սակայն, խստագույնս ուսումնասիրվում են ՄԻԵԴ-ի կողմից, որը պետք է կշեռքի նժարին դնի մի կողմից նման առանձնահատկություններով պայմանավորված պահանջները, իսկ մյուս կողմից էլ գովազդի առարկան: Այնուհետև, Դատարանը պետք է ուսումնասիրի կիրառված սանկցիան գործի ամբողջական հանգամանքների համատեքստում:

Նշված գործում, դիմումատուի կողմից գովազդն արգելող փաստաբանական պալատի որոշումը վերահաստատելով՝ ներպետական դատարանը եզրակացրեց, որ գովազդն անցել է Բարսելոնայի փաստաբանական պալատի կանոններով սահմանված թույլատրելի սահմանը: Այդ առնչությամբ ՄԻԵԴ-ը գտնում է, որ վկայակոչվող կանոնները թույլ են տալիս գովազդել որոշ հանգամանքներում՝ գործունեություն սկսելիս, անդամությունը, հեռախոսի համար, հասցեն փոխելիս և որոշ այլ հանգամանքներում: Այսպիսով, արգելքը բացարձակ չէր:

Փաստաբանական պալատի անդամների հետ անմիջական շփումների շնորհիվ անդամ երկրների փաստաբանական պալատները և ներպետական դատարաններն ավելի լավ դիրքում են, քան թե միջազգային դատարանը որոշելու, թե ինչպես տվյալ պահին պետք է ճիշտ կերպով հավասարակշռել տարբեր շահերը՝ այն է արդարադատության պատշաճ իրականացման պահանջները, մասնագիտական արժանապատվությունը, այլ անձանց կողմից իրավաբանական օգնության հնարավորության մասին տեղեկատվության ստացումը և փաստաբանական պալատի անդամներին հնարավորության ընձեռումը գովազդելու իրենց մասնագիտական գործունեությունը:

Նշվածի հիման վրա ՄԻԵԴ-ը եզրակացնում է, որ իշխանությունների արձագանքը չի կարող անհամաչափ համարվել սահմանված նպատակին:

ՄԻԵԴ-ը միաձայն վճռեց, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել: